



**ԴԻԼԻՋԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՎԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
(ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ)**

Հասցե. ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55

Հեռ. (094) 763 594, E-mail info_dilijan@aarhus.am, albertharoyan@rambler.ru

№ Ե-004/14

29-ը մայիսի 2014թ.

**ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի
համայնքապետ Արմեն Սանթրոսյանին
Դիլիջանի Օրհուս կենտրոնի համակարգող
Ալբերտ Հարոյանից**

Հարգելի պարոն Սանթրոսյան.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. 2014 թվականի հունվարից – մայիս ժամանակահատվածում Դիլիջան համայնքում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված աշխատանքների մասին
2. Համայնքի բնակիչներին մտահոգող՝ համայնքի աղբահանության և սանմաքրման աշխատանքների կազմակերպման և իրականացման վերաբերյալ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության/30օրյա ժամկետ/):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,

Դիլիջանի Օրհուս կենտրոնի համակարգող

Ալբերտ Հարոյան